ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 օգոստոսի 2026 թվականի N 1167-Ա

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշմամբ սահմանված կարգի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9.1-ին կետերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2026 թվականի ամառային զորակոչից տարկետում տալ կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող և բակալավրի (դիպլոմավորված մասնագետի, ինտեգրացված)՝ ներառյալ տվյալ ուսումնական հաստատության նախապատրաստական ծրագրի համար մինչև մեկ տարի ժամկետով (եթե նախապատրաստական ծրագիրը չի համարվում ինքնուրույն հանրակրթական կամ միջին մասնագիտական ծրագրի մաս) սովորող (կամ դիմորդ հանդիսացող) քաղաքացիների՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2026 թվականի ամառային զորակոչից տարկետում տալ կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող և մագիստրատուրայի կրթական ծրագրով սովորող (կամ դիմորդ հանդիսացող) քաղաքացիների՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2026 թվականի ամառային զորակոչից տարկետում տալ կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող և ասպիրանտուրայի կրթական ծրագրով սովորող (կամ դիմորդ հանդիսացող) քաղաքացիների՝ համաձայն N 3 հավելվածի:

4. Սահմանել, որ սույն որոշման N 1 հավելվածում ընդգրկված այն քաղաքացիները, որոնց 18 տարեկանը լրանում է սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, նրանց մասով սույն որոշումն ուժի մեջ է մտնում նրանց 18 տարին լրանալուց հետո:

5. Սահմանել, որ սույն որոշման N 1 հավելվածի 1-ին կետի 17-րդ ենթակետով Վարազդատ Արսենի Միքայելյանի, 21-րդ ենթակետով Լևոն Հրանտի Մելիք-Շահնազարյանի, 28-րդ ենթակետով Ռաֆայել Արշակի Ղազարյանի, 41-րդ ենթակետով Արեգ Արմենի Գրիգորյանի, 53-րդ ենթակետով Արման Արթուրի Ավագյանի, 62-րդ ենթակետով Աշոտ Հարությունի Նուրազյանի, 64-րդ ենթակետով Արսեն Վասիլի Մամիկոնյանի, 82-րդ ենթակետով Արման Գրիգորի Առուստամյանի, 109-րդ ենթակետով Էրիկ Հունանի Սանթրոսյանի, 137-րդ ենթակետով Հովհաննես Գագիկի Խաչերյանի, 162-րդ ենթակետով Ռոբերտ Հակոբի Խոցանյանի, 165-րդ ենթակետով Շանթ Համազասպի Սարադյանի, 166-րդ ենթակետով Ռոբերտ Պետրոսի Պետոյանի, 214-րդ ենթակետով Տիգրան Արշակի Մանուկյանի, 217-րդ ենթակետով Ռաֆայել Արմանի Ջհանգիրյանի մասով սույն որոշումն ուժի մեջ է մտնում նրանց այլ հիմքով ստացած տարկետումը դադարելու օրվանից:

6. Սահմանել, որ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո դադարեցված են համարվում N 2 հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով Արթուր Անդրանիկի Գրիգորյանին, 3-րդ ենթակետով Տիգրան Հայկի Դավթյանին, 13-րդ ենթակետով Հրանտ Արմենի Պողոսյանին, 18-րդ ենթակետով Վահան Ջորայրի Ավետիքյանին, 19-րդ ենթակետով Արծրուն Ջորայրի Ավետիքյանին, 25-րդ ենթակետով Օհան Առաքելի Սեմիրջյանին, 26-րդ ենթակետով Հարություն Գուրգենի Հակոբյանին, N 3

հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով Արսեն Գեղամի Մադանյանին, 3-րդ ենթակետով Վարդան Թրահեղի Վարդանյանին և 12-րդ ենթակետով Անդրանիկ Արթուրի Առաքելյանին նախկինում տրված տարկետումները, և ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հուլիսի 20-ի «Կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2023 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու մասին» N 1232-Ա որոշման N 1 հավելվածի 2-րդ կետի 3-րդ, 36-րդ և 52-րդ ենթակետերը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի «Կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2022 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու մասին» N 1111-Ա որոշման N 1 հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետը, 6-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի հունվարի 22-ի «Կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2025 թվականի ձմեռային զորակոչից տարկետում տալու մասին» N 84-Ա որոշման N 2 հավելվածի 1-ին կետի 5-րդ ենթակետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի «Կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2024 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու մասին և կառավարության մի շարք որոշումներում փոփոխություն կատարելու մասին» N 1055-Ա որոշման N 2 հավելվածի 3-րդ և 4-րդ կետերի 1-ին ենթակետերը:

7. Սահմանել, որ սույն որոշման NN 1, 2 և 3 հավելվածներում նշված քաղաքացիների համար սույն որոշմամբ տրված տարկետումներն ուժի մեջ են մտնում մինչև 2026 թվականի սեպտեմբերի 30-ը Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն համապատասխան կրթական ծրագրով ուսումնառության ընդունվելու, սովորելու և ուսումնառության ժամկետների վերաբերյալ ուսումնական հաստա-

տության կողմից տրված տեղեկանք ներկայացնելու դեպքում: Եթե մինչև 2026 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ սույն որոշման NN 1, 2 և 3 հավելվածներում նշված քաղաքացիները Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն չեն ներկայացնում համապատասխան կրթական ծրագրով ուսումնառության ընդունվելու, սովորելու և ուսումնառության ժամկետների վերաբերյալ ուսումնական հաստատության կողմից տրված տեղեկանք, ապա նրանք համարվում են սույն որոշման շրջանակներում տարկետման իրավունք չունեցող և ենթակա են պարտադիր զինվորական ծառայության՝ հայտարարված 2026 թվականի ձմեռային զորակոչի ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

07.08.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ